

**Г о л ё в и с**

## ԱՐԵՔԵԱԼԸ

նւ այն անկատ լապատաժի. որ ոչ դուք հող  
բազում, և վազվաղակի բռնաւ առ ի շոտէ  
հիթու երկրին, ի ծագել արեւ ստոպացաւ,  
և զի ոչ զոյին արմատք, չորտացաւ.

1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000 1000

Օդը սեղմ էր և տաքուկ, երկինքը պարզ և աստ-  
ղագարդ։ Տների ներսը չէր գրաւում մարդկանց, ուստի  
ժողովուրդը լցուած էր գուրսը և զբունում էր սալած  
մալթերի վրայ, կամ նոր կանաչող ալգիների ճեմելիք-  
ներում։ Շառագոյն լուսինը, որ նոր էր բարձրանում  
մթնացող հորիզոնում, խոստանում էր գեղեցիկ, լուսնկալ  
գիշեր։ Այդ պատճառով փողոցներում աջ ու ձախ սա-  
ցող կառքերի թուրին՝ հետզհետէ աւելանում էին և այն  
դեսպահները, որոնք իրենց մէջ ինամքով ծածկում էին  
հեռաւոր զբօսարանների խորհրդաւոր յաճախորդներին։  
Այդպիսով գրսի աղմուկը գնալով սասականում էր և  
կենդանութիւնը տիրում ամեն տեղ։

Սիալն ծերուկ փելիսոփան, կամ զեղեցկուհուց մերժուած սիրահարը կարող էին այդպիսի ախորժելի երես կոլին փակուիլ տան խորշերում և մտածել՝ մինք՝ աշխարհի ունայնութեան և միւսը՝ իւր վշտի ծանրութեան վրայ։ Բայց կեանքի արժէքը մեծագրել գիտցող մարդը, մանաւանդ եթէ դա երիտասարդ էր կամ երիտասարդուհի, չէր կարող այդպիսի գրաւիչ ժամերին չը գըտնուիլ զբոսնողների ընդհանուր ժխորի մէջ։

Սակայն արի տես որ հենց ալղպիսի մի ժամանակ՝  
ներքին լարկի մի ցածուն առաստաղով՝ բայց ընդարձակ-

սենեակի մէջ ժողովուած էին մի խումբ աշխոյժ երի-  
տասարդներ, որոնք չէին մտածում ոչ նորեկ գարնան,  
ոչ սիրուն լուսնի և ոչ ճեմելիքներում զբօսնող գեղեց-  
կուհիների մասին։ Նրանք զբաղուած էին աւելի արժա-  
նաւոր, կամ ինչպէս իրենք կասէին՝ «ազնուական» գոր-  
ծով։ Դրանք հայ ուսանողներ էին՝ համալսարանի կամ  
գարձրագոյն դպրոցների վերջին կուրսերից, որոնք յա-  
ճախ ժողովում էին ալդաեղ միմեանց հետ տեսնուե-  
լու, մտերմապէս զրուցելու, մալրենի լեզուով կարդա-  
լու, կամ հեռաւոր հայրենիքից ստացուած նորութիւն-  
ները միմեանց հաղորդելու, երբեմն էլ իրենց ցա երի  
մասին միմեանցից կարծիք, կամ խորհուրդ հարցնելու։

Այդ քաղաքում, շատ կալին հայ ուսանողներ, ո:  
քանց մեծ մասը իւր ազատ ժամերը անօրինում էր  
ալլ կերպ։ Դրանցից ոմանք սիրում էին յաճախ չափել  
չփողոցները՝ աշխարհի չար ու բարին ալդ տեղերում  
միայն ուսումնագիրելու նպատակով։ ոմանք զբաղելում  
էին սովորական թղթախաղով ժամտնակի ձանձրոյթը  
անցցնելու համար։ ուրիշներն ալցելում էին հարուստ  
ընտանիքներին՝ նրանց տիրուհիներին զբաղեցնելու, կամ  
օրիորդների սիրաց գրաւելու յուսով, և երբ չէին յա-  
ջողում ոչ մինի և ոչ միւսի մէջ, շատանում էին հա-  
մեղ ընթրիքներ գալելելով։ Մի մասն էլ էսթկուրենն  
փիլիսոփայութեան հետևելով՝ ազատ ժամերը նուիրում  
էր հաճութեան աղջիկների ընկերութեան, մտածելով  
թէ՝ ալդպիսով աւելի լաւ է ծառալում մարդ արարածի  
փակական կոչման։

Բայց ներքնայարկի ցածուն առաստաղով սենեա-  
կում ժողովուածները չէին պատկանում լիշեալների թուին։  
Նրանք ուսանողութեան ամենընտիր մասը, կամ բանսո-  
տեղծօրէն ասած՝ ծաղիկներն էին, որոնք իրենց կոչման  
չշանակութիւնն ըմբռնելով՝ ժողովուել էին ալդաեղ, ինչ-  
պէս ասացինք, լաւագոյն մի գործով զբաղուելու համար։

Եւ նրանց ալսօրուալ պարապմունքի առարկան նը-  
շանաւոր էր շատ կողմերից։ Ալսօր քննւում էր այն կա-  
րևոր հարցը թէ՝ նրանցից ո՞րը բնչպէս պիտի գործէ  
կեանքի ասպարէզը մտնելուց լետոր։

Ալդպիսի հարցեր, ինչպէս լալտնի է, փորձուած  
մարդիկ չեն տալիս իրար, միշտ մտածելով թէ՝ «բանը՝  
քան ցոյց կըտար»։ Իսկ փորձուած հոգևորականը մինչև  
անգամ տսում է «Օր աւուր բղխէ զբան և գիշեր՝ գի-  
շերի ցուցանէ զգիտութիւն»։ ուստի և երբէք խոստում  
չէ անում։ Բայց ուսանողն, հօ գիտէք, անձնիշխան է  
ամեն դէպքում, հետևապէս և կարող նման հարցեր  
քննելու։ Անփորձութիւնն էլ, անշուշտ, մի արտօնու-  
թիւն է, որից մարդիկ, երբեմն, օգտւում են լաջողու-  
թեամբ։ Եւ քիչ չէ պատահում որ բաղան աւելի ժպտում  
է նրանց, որոնք գործում են առանց երկար մտածելու։

Ինչ և է, առաջադրեալ խնդրի մասին արդէն եր-  
կար խօսել ու վիճել էին ուսանողները, երբ նախագահ  
Մանուկեանը, որ մի առողջ, զուարթտածալն և կոպիտ  
արտաքինով երիտասարդ էր, ուժգին զանգահարելով՝  
ժողովականների ուշադրութիւնը հրաւիրեց իւր վրայ։  
Դահլիճում լուսթիւն տիրեց։

— Խնդիրը մենք քննեցինք ամեն կողմից, տսաց  
նախագահը, մինչև անգամ աւելորդ մանրամասնութիւն-  
ների մէջ մտանք. ալժմ արդէն ժամանակ է ամփոփել  
մեր մտքերը, ձևակերպելով այսպէս։

Գարտուղարն, իսկոյն լարեց ուշադրութիւնը՝ նա-  
խագահի խօսքերը գրի առնելու համար։

— Մենք որդիք ու անդամներ ենք ալսպիսի մի  
ազգի, շարունակեց նախագահը, որ ունի կարիքներ ու  
ցաւեր։ Ալդ ազգն իրաւունքով սպասում է մեզ, իւր  
հարազատ որդիներին, որովհետև գիտէ որ մենք բարձր  
ուսում ու կրթութիւն ստանալով՝ ձեռք ենք բերում  
այն ոլժը, որով պիտի կարենանք իւր կարիքները լցնել

և ցաւերը դարմանել: Հետեւապէս, մեզ վրայ գրւում է սրբազն պարտք՝ ի դերև չըհանել սպասող աղջի յոխնու ու ակնկալութիւնը: Մեղանից իւրաքանչիւրը պիտի համարէ իրեն մի պարտապան, որ ունի վճարելիք իւր պարտատիրոշ, այսինքն ազգին, ուստի և մտածէ այդ պարտքը վճարելու եղանակի վրայ, և վճարէ սիրով, համարելով այդ պարտքը ոչ թէ բեռն ու ծանրութիւն, այլ իւր սրտին հանգիստ և հոգւոյն՝ հաճուք բերող մի գործ: Մի երկու ամիս ևս, և մենք կը թողնենք այն տաճարները, որոնց լարկերի տակ մեր սրտերում ցանեցին գիտութեան, բարւոյ, ճշմարտի և գեղեցիկի լաւագոյն սերմերը. մի երկու ամիս ևս, և մենք կը բաժանուենք իրարից, ո գիտէ, գուցէ լաւիտեան: Արդ, քանի միասին ենք, քանի տեսնում և լուռմ ենք իրար, ահա խոստանում ենք միմեանց ընկերի և ուսանողի ազնուագոյն խոստումով, որ մեր սրտերում ցանուած սերմերը պիտի աճեցնենք կեանքում լիսնապատիկ, հարիւրապատիկ և ալդ սերմերից ելած պտուղները վալելել պիտի տանք նախ՝ այն ազգին ու ժողովրդին, որին պտտկանելու պատիւն ունինք և ապա թէ զրանից բաժին հանենք մեզ: Զենք որոշում, ի հարկէ, թէ ով մեղանից Բնէ չափով է պարտաւոր ծառալել ազգին, բայց հաւատում ենք թէ՝ մեղանից իւրաքանչիւրը սիրով պիտի լսէ այն ձայնը, որ կանչում է՝ «Հունձք բազում են և մշակք սակաւ...», հետեւապէս և պիտի զտապէ գառնալ «մշակ» այդ «Հունձերի» համար և աշխատել ու քրտնել ազգի անդաստանում: Խոստանում ենք որ ոչ ոք մեղանից չի պիտի լետքաշուի վատաքար, կամ անէ թէ՝ իմ ոյժն անկարող է այս ազգի կարիքները լցնելու. այլ պիտի աշխատէ ըստ իւր կարսղութեան, լիշելով այն առածը թէ՝ ուր կամք կայ, այնտեղ կայ և ճանապարհութեան մեջ իւր կաթիլներով ծակում է ապառաժը, միթէ մեր կամքը այդ չի կարող անել: «Ամենալաւ իմաստութիւնը,

հաստաց որոշումն էս, ակում էր նապօլէօնը։ Եւ ես կարծում եմ, եթէ մենք ևս կեանքի մէջ հետեւինք այդ իմաստուն խրատին, անշուշտ կըգործենք աւելի յաջողութեամբ, քան կարող ենք ալժմ երետկայել, Մեր ժողովուրդն, իրաւ, կարիքներ շատ ունի և այդ ամենը մենք չենք կարող դարմանել։ Բայց եթէ այսօր մենք մի մասը դարմանենք և վազն ուրիշները՝ մի ուրիշ մասը, և այսպէս գործը շարունակուի անընդհատ, կարիքները կըդարձմանուին կարճ ժամանակում և ցաւերը կը վերանան անգգալի կերպով։ Աշխատող ձեռքը, պարոններ, չի պարել երբէք վարդալիք պարտէզ, այլ կերթայ ալնտեղ, ուր հողն անմշակ է և գաշտերը խոպան, նա եւր քրտինքը կըթափէ այդ հողում, որպէս զի ապագայում միսիթարուի այն մտքով թէ՛ ինքն իրաւամբ կրում է Արարչի պատկերը, վասնզի կարողացաւ հինչն ստեղծել ոչնչից։ Պատմութեան մէջ յայտնի բազմաթիւ անձինք նշանաւոր են դարձել և ազգերի ու սերունդների սէրն ու սիրտը գրաւել ոչ այն պատճառով որ իրենց անձն են սիրել, կամ շահը խնամել, այլ որովհետեւ նուիրուել են հաստրակաց բարւոյն, ժողովրդին ու հայրենիքին։ Դրանցից շատերը սկսել են գործել ամենաննպաստ պայմաններում, շարունակ արգելքների և հալածանքների հանդիպելով։ Բայց որովհետեւ ունեցել են հաստատուն կամք, որովհետեւ անկեղծօրէն սիրել են ժողովուրդը, ուստի և յաղթել են ամեն արգելքների և ստեղծել աշխարհում հոյակապ գործեր։ Մենք էլ, ուրեմն, գործելու ժամանակ առաջնորդ ունենանք պատմութեան հերոսներին և ինչ աննպաստ պայմանում էլ որ սկսենք մեր գործը, լիշենք այն իմաստուն նշանաբանը, որ փորուած է եղել մի հին կացնի վրայ՝ «կամ կըգտնեմ ճանապարհը և կամ ինքս բաց կանեմ»։ Այսպիսի որոշումով գործել ցանկացող մարդուն՝ արգելքը չի վհատեցնիլ, այսպիսի մարդու առաջ՝ ժայռերն անգամ կըհալուեն...։

Այս եղանակով դեռ երկար խօսեց նախագահը, որ ճեմարանի նախկին սան լինելով՝ վարժ էր հայ լեզուով ճառ արտասանելուն, ուստի երբ աւարտեց, ուսանողները ոգեսորուած ծափահարեցին նրան։ Ապա մկան ամեն կողմից հանդիսաւոր խոստումներ անել այն մասին թէ՝ արդարեւ, կեանքի մէջ մտնելուց յետ՝ պիտի նուիրաւին հասարակաց շահին։ Երիտասարդներից ոմանք, մինչև անգամ, իրենց ապագայ գործունէութեան ծրագիրն առաջարկեցին, ոմանք էլ ալդ ծրագիրը պակասաւոր գտնելով, աւելի ընդարձակ խոստումներ արին։ Գտնուեցան ի հարկէ, և այնպիսիները, որոնք համեստութեամբ խոյս տուին թէ ծրագիր առաջարկելուց և թէ այն քննադատելուց։

Բայց բոլոր խօսողների մէջ աւելի դրական և կշիռ ունեցող խոստումը արաւ Պետրոս Կամսարեանը, որ միքարեկազմ և գեղեցիկ արտաքինով երիտասարդ էր։ Լինելով հարուստի զաւակ, նա միեւնոյն ժամանակ բարեսիրտ էր և գիւրազգաց, կարիքի ժամանակ օգնում էր ընկերներին և ուսանողական աշխատութեանց վերաբերեալ գործերում, նա իւր համար ունէր որոշ չափ ու կշիռ։ Ատում էր ինչպէս անհոգութիւնը, նոյնպէս և ամեն ծալրայեղութիւն։ ուստի և խոյս էր տալիս այնպիսի ընկերներից, որոնք ներկայացնում էին իսկական ուսանողի տիպ։ այսինքն, լինում էին անփոլթ՝ վաղուայ պարտքի նըկատմամբ, անհաշիւ՝ իրենց ծախսերի մէջ, անտարբեր դէպի կարգ ու կանոնը, մաքրասիրութիւնը և ճշդապահութիւնը։ Եւ թէպէտ այս պատճառով նա ընկերներից ստացել էր պեղանտ մականունը, այսուամենալնիւ, ալդ բանից նա չէր վիրաւորում, որովհետև փողով գիտէր որ անկարգ ու անկանոն եղանակով ապրող-

ները՝ միշտ ալդ անունով են մկրտում կարգապահ մարդկանց, որպէս զի դրանով իրենց թերութիւնը ծածկեն:

Այս իսկ պատճառով ուսանողներն ապշեցան, երբ Կամսարեանը հանդիսաբար յայտնեց թէ՝ որոշել է քընութիւններից յետ վերադառնալ հայրենիք և իրեն նուիրել իւր ազգակիցների ամենից աւելի օգնութեան կարուտ դասակարգին, ալսինքն, մնոնել գիւղը և այնտեղ հիմնել օգնութեան մեծ գործ, յատկացնելով ալդ նպատակին՝ իւր հարուստ հօրից իրեն հասանելիք ժառանգութիւնը:

Սկզբում ընկերները, կարծես, չըհասկացան ալդ յայտարարութեան միտքը և նայում էին իրար հարցական հայեացքներով: Բայց երբ երիտասարդը կրկնեց իւր որոշումը աւելի մէկին և հաստատապէս, ներքնայրկի դահլիճը թնդաց կեցցէների որոտնդոստ ձայներից և մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացը ին Կամսարեանին դէպի առաստաղը և սկսան շրջեցնել դահլիճի շուրջը՝ շարունակ «կեցցէ» գոռալով և «Ներիք ընկերք» երգելով: Աղմուկը դադարելուց յետ՝ Պետրոս Կամսարեանի յայտարարութիւնը ընդունուեց ուսանողների պաշտօնական գովեստով և խօսին էլ մուծուեցու արձանագրութեանց տետրակը:

## Բ.

Ամառ է. քննութիւնները վերջացել են: Կամսարեանն ստացել է աւտրաման վկայական: Այժմ նա իւրաւաքան է, կարսող է ապրել քաղաքում և շրջապատել իրեն յարմարութիւններով, ալսինքն, կահաւորել մի փառաւոր տուն՝ համաձայն իւր նուրբ ճաշտկի պահ հանջներին. ապա ընդարձակել ծանօթութիւնների շըրջանը. տացելել բարձր դասակարգի անձանց, կապեր հաստատել. խնդրաբարկուներ ընդունել, դատեր պաշտպանել և իւր հասարակական գործունէութեամբ անուն ու հոչակ վաստակել:

Բայց միթէ ալդ պիտի լինի երիտասարդ Կամսարեալ-  
նի կեանքի նպատակը, Երբէք. նա աւելի արժանաւոր,  
աւելի բարձր և սուրբ նպատակ ունի աչքի առաջ. նա ալժմ  
իրեն չէ պատկանում, հետեւապէս և չէ կարող ծառալել  
իւր անձին: Նա պիտի նուիրուի իւր տկար ազգակիցներին,  
նրանց համար պիտի հոգալ. նրանց համար մտածէ:

Եւ ալդ պիտի անէ ոչ թէ նրա համար որ հան-  
դիսաբար խոստացել է ընկեր ուսանողներին, ոչ, այլ  
որովհետեւ ինքն ալդ կամենում է սրտանց. որովհետեւ  
ամեն անզամ, երբ խոսք է եղել ալդ ազգակիցների  
ժամին, իւր սիրաը թունդ է առել ու թռել դե-  
պի նրանց. որովհետեւ ինքը միշտ մի առանձին սէր, մի  
ժագուն գորով է տածել դէպի ալդ հեռաւոր եղբայր-  
ները. Եւ թէպէտ անձամբ չէ տեսել նրանց, բայց  
միշտ լսել ու կարդացել է թէ բարի մարդիկ են, ազ-  
նիւ և աշխատասէր. թէ սեփհական շահի համար ոչ ոքի  
չեն վնասում, այլ ապրում են իրենց ճակատի արդար  
քրտինքով. Բայց թէ, որովհետեւ տգէտ են և անու-  
սում, ուստի մնում են անզօր աշխարհի չարիքների ա-  
ռաջ. որով և մի կողմից բնութիւնն է նրանց զրկում,  
խոկ միւս կողմից՝ չար մարդիկն են կողեքում, ալդ  
պատճառով էլ նա վարում է գառն ու չարքաշ կեանք  
և մնում կարօտ բարի մարդիկանց օգնութեան: Բայց,  
միւնոյն ժամանակ, նա լսել ու կարդացել է և ալն,  
թէ իւր ալդ ազգակիցները կարող են ազատուել կեան-  
քի դաւնութիւններից և հասնել մի օր երջանիկ դրու-  
թեան, եթէ խելօք գլուխները մտածեն նրանց մասին  
և կարող ձեռքերն աշակցեն նրանց աշխատութեան:

Եւ ահա Կամսարեանն ունի թէ խելօք գլուխ և  
թէ կարող ձեռքեր. ինչու, ուրեմն, չերթալ չ'որոնէ  
ալդ սիրելի ազգակիցներին, չապրէ նրանց հետ, չըսո-  
վորեցնէ նրանց իրենց գրութիւնը բարւոքելու և մար-  
դավայել կերպով ապրելու եղանակը:

Այս մտածութիւններն ոգևորում էին երիտասարդ իրաւաբանին այն երկար ճանապարհին, որը հիւսիսից տանում էր նրան հարաւ։ Ալգտեղ նա շարունակ ծրագիրներ էր կազմում իւր ապագայ գործունէութեան համար և նրանցով հիանում։ Այդ ծրագիրների մէջ մտնում էին նաև՝ զիտական հասարակութեան իրաւանքների պաշտպանութիւնը, որ արդէն վերաբերում էր իւր մասնագիտութեան և ամփոփում իւր մէջ գիւղցու կալուածների յափշտակութիւնից ազատելու, հարկահանութեան ժամանակ տեղի ունեցող անարդարութիւններն արգելելու, գիւղացուց լաճախ անտեղի կերպով պահանջուղ կոռն ու ձրի մշակութիւնը մերժել տալու և պաշտօնի մէջ՝ ի վնաս գիւղացու՝ զեղծումներ կատարող և արդարագատութեան աչքից խուսափող պաշտօնեանների արարքը մերկացնելու կարևոր խնդիրները. երկրորդ՝ լրտաւորութեան գործի հիմնադրութիւնը, որ կայանում էր կանոնաւոր դպրոցներ հաստատելու, գեղջակ մանուկներին ձրի ուսում մատակարարելու, մանկական-ժողովրդական գրադարան հիմնելու և հաստկաւոր գիւղացիններին ազատ ժամերում և, մանաւանդ, ձմեռ ժամանակ օդաներում, կամ եկեղեցում գասեր խօսելու և աշխարհի չար ու բարի հետ նրանց ծանօթացնելու մէջ. երրորդ՝ գիւղացու տնտեսական դրութեան բարուքումն, որ կախումն ունէր նրա երկրագործական, ալգեպանական, անսանապահական, հաւաքուծական, և այլ այսպիսի աշխատութիւնները կանոնաւորելուց, իսկ ալդ նպատակին հասնելու համար՝ պէտք էր սովորեցնել նրան գիտութեան մշակած ձևերով տնկելու և պատուաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անսառուն, հաւ և մեղու դարմանելու, պարտէզ ու բանջարանոց մշակելու գիւղին եղանակները։ Տնտեսական գրութիւնը բարւաքելուն էր վերաբերում, նաև, փոխառու գանձարան

Հիմնելու դիտաւորութիւնը, որ եթէ լաջողէր նրան իրագործել, դրանով ոչ միայն վաշխառութիւնը կըհաւածուէր գիւղերից, այլ և կստեղծուէր բարութեան միգործ, որ կօգնէր գիւղացուն իւր աշխատութիւնն ու արդիւնքը ոչ թէ կեղեքիչների ձեռքը, այլ իւր լարկի տակ ժողովելու:

Բոլոր այս ծրագիրներն այնքան ընդարձակ էին որ, նոյն իսկ, նրանց համապօտ կազմութիւնը խլեց Կամսարեանի՝ Մոսկուտից մինչև Կովկասի սահմանը հատունելու միջոցում ունեցած ազատ ժամերը, Եւ երբ նա վերջին անգամ նայեց իւր Նոտե-երի տետրին և տեսաւ նրան ծալրիծալը լիքը իւր տպագտի գործունէութեան վերաբերեալ գիտողութիւններով, զգաց իւր սրտում մի թագուն ուրախութիւն, որը բղխում էր՝ երբ և իցէ առաքեալից փառք ու հռչակ ստանալու հաստատուն լոյսից:

Վերջապէս երիտասարդը հասաւ Թիֆլիս։ Հարկ չըկալ նկարագրելու այն ընդունելութիւնը, որին հանդիպեց նա հօր տանը Ամենքդ արդէն զիտէք թէ պանդխտութիւնից վերադարձող որդուն ինչպէս են ընդունում կարօտակէզ ծնողները, կամ նորատի քոլը երն ու եղբայրները։ Որքան ջերմ համբոյրներ, որպիսէ՛ գըը կախառնութիւն, խանդաղատանք, ուրախութեան արցունքներ և տպա ինչպիսէ քաղցը ու երջանիկ ժպիտներ շրջապատում են նորեկին։ Եթէ զրա վրան էլ տւելացնենք այն, որ ալդ բոլորը տեղի էր ունենում մի հարուստ տան մէջ, ուր մեծ թէ փոքր, աղջիկ թէ տղալ չըգիտէին թէ ինչ է կարօտութիւնը, որն աղքատի տան մէջ իւր ներկայութիւնն զգալ է տալիս, նոյն իսկ, այն վալրկեանին, երբ մալրը ողջագուրում է պանդխտութիւնից վերադարձող որդուն, որը լաճախ ցըրտացնում է համբուրի ջերմութիւնը և շուրթերի վըրայ ժպիտը սառեցնում, այն ժամանակ կըհասկացուէ

թէ՝ որպիսի՛ երանութեամբ էր շրջապատուած նորաւարտ, գեղեցիկ արտաքինով և դեռ ամենքին սիրելի՝ Պետրոս Կամսարեանը:

Թողնենք նրան ուրեմն զուարճանալ առ ալժմ իւրայինների հետ:

## Գ.

Անցաւ մի երկու շաբաթ և ալդ միջոցին խօսք ու զրոյց չեղան՝ երիտասարդի սկսելիք պարապմունքի մասին, որովհետև ամենքի համար էլ պարզ էր թէ՝ ինչով կարող է զրադուել մի իրաւաբան: Նրա առաջբաց էին թէ պետական պաշտօնների և թէ մասնաւոր պարապմունքի արդիւնաւոր ճանապարհները: Եթէ առաջինը չըլաջողէր, երկրորդի համար բաւական էր երկու տող լայտարարութիւն և, ահա, լաճախորդները իրար թևակոխելով՝ կըլցուէին փաստաբանի նորաքացընդունաբանը:

Այսպէս էին մտածում Կամսարեանի ծնողները և ցանկանում որ իրենց որդին առ ժամանակ հանգստանալ և, մանաւանդ թէ, կազդուրուի զովարար ամարանցում, ուր մտադիր էին տեղափոխուել քիչ ժամանակից լետոր:

Սակայն մի օր զարմանքով տեսան նրանք որ իրենց որդին ինչ որ պատրաստութիւններ է տեսնում: Նա գնել էր ճանապարհի նոր հագուստ, երկարաճիտկողիկներ, ձիու թամբ, նոր տեսակի պայուսակ, որսորդական հրացան և ալլ այնպիսի իրեր; որոնք կարող էին հարկաւորուել միայն վալրենի տեղերում, ուստի հետաքրքրաւեցան իմանալ թէ՝ ինչո՞ւ համար են դրանք:

—Պիտի ճանապարհորդեմ, տաաց նա ծնողներին:

—Պիտի ճանապարհորդես... բնչպէս, ուրեմն ամարանց չը պիտի գաս, հարցրեց երիտասարդի մայրը անհանգստութեամբ:

—Ոչ. պիտի գնամ դէպի հեռաւոր հայ դիւղերը  
եւ, ով գիտէ, գուցէ շատ ուշ վերադառնամ, կամ...  
(ուզում էր ասել «բոլորովին չըվերադառնամ», բայց  
դգալով որ լաւ չէ վախեցնել ծնողներին, խօսքն ընդ-  
հատեց):

—Այդ անկարելի է, ճշաց իսկոյն տիկին Կամսա-  
րեանը, կամ իւր լեզուով ասած՝ Լիդիա Պաւլովնան, որ  
մի պարարտ, կլորիկ և թէպէտ լիսունը անցած՝ բայց  
գեռ գրաւչադէմ և հաճելի լինելու առաւելութիւննե-  
րով օժտուած կին էր — այս, անկարելի է...այսքան ժա-  
մանակ յուսով սպասել եմ քո դարձին որ գոնէ ամա-  
ռուալ ամիսները միտօին անց կացնենք, իսկ գու ասում  
ես թէ պիտի ճանապարհորդեմ. ոչ, ալդ չի լինիլ, ա-  
սաց տիկինը վճռաբար և մէջքը թիկնաթոռին տալով՝  
աշխատեց պարարտ մարմինը զետեղել նրա վրայ որքան  
կարելի է հանգիստ:

Տիկին Կամսարեանի «Ո՛չ, ալդ չի լինիլ» վճռոն ու-  
նէր իւր յարգելի պատճառները: Բացի այն որ նա, իբ-  
րև սիրող մալր, կըցանկանար անշուշտ ամառն անցնել  
իւր որդու հետ, կար և մի ուրիշ անհրաժեշտ պատ-  
ճառ, որ դրդում էր նրան չըհամաձայնուել որդու հետ:  
Դա մօր փառասիրութիւնն էր. այն թագուն զգացմուն-  
քը, որ շատերը իննամքով փայփայում են սրաի խոր-  
քում, բայց որի գոյութիւնն ուրանում են մարդկանց  
առաջ; Լիդիա Պաւլովնան առաջին անգամը չէր գնում  
ամառանոց, ուստի նա գիտէր որ ամեն ամառ այնտեղ  
ստեղծում է ծանօթների ու բարեկամների հետաքըր-  
քրական շրջան. տեղի են ունենում նոր տեսակի ըն-  
դունելութիւններ. ու ալցելութիւններ, սարքում են  
փայլուն զբօսանքներ, ճաշեր ու պիկնիկներ, երբեմն և  
երեկոյթներ: Արդ, չէ որ մեծ փառք էր մի մօր հա-  
մար այդ բոլոր տեղերում երևալ իւր նոր աւարտած,  
գեղեցիկ արտաքինով, հաճելի ձևերով և տակաւին ա-

մուրի երիտասարդ որդու հետ... ալդպիսի մայրն, առ  
հասարակամարանոցի սիրած ու փայփալած անձն է լինում:  
Բոլորը, (խօսքս, ի հարկէ, հարսնացու աղջիկ ունեցաղ մայ-  
րերի, կամ փեսացու փնտրող հարսնացուների մասին է  
— իսկ եթէ դրանց թւում դուք դասէք, նաև, նորա-  
տի ալրիներին, դրա գէմ էլ ոչինչ չունիմ), շրջապատում  
են նրան սիրով, քնքութեամբ ամենակեղծ բարեկա-  
մութեամբ: Ալդպիսի մօրը, բնականարար, ալցելում են  
յանահն և ալն՝ միշտ երկուսով կամ երեքով (նայելով  
թէ՝ ալցելողը քանի հարսնացու աղջիկ ունի), հրաւի-  
րում են շատ տեղերից, նոյն իսկ ալնպիսի տներից, ուր  
նա երբէք ուրքը դրած չէ եղել, բայց ծանօ-  
թացել է նրանց տիրուհիներին ալս ինչ պիկնիկում կամ  
տղարահանդիսում: Բացի ալդ, հանդիսաւոր ճաշերի ժա-  
մանակ ամենից պատուաւոր տեղը առաջարկում են ալդ-  
պիսի մօրը և ամենից համեղ պատառը հրամեցնում  
նրան: Հարկ չկալ ասել որ զբօսարաններում էլ ամե-  
նից սիրելի ու քնքուշ խօսակիցները շրջապատում են նը-  
րան, եթէ երիտասարդ որդին ևս զբօսնում է նրա հետ.  
միով քանիւ ամեն տեղ կատարւում է ալն, ինչ որ հալ-  
կական առածն է բնորոշւմ, այսինքն ռձուածեղի հա-  
մար թաւի կոթը պաշում են»:

Այս ամենը գիտէր տիկին Կամսարեանը, ալս ա-  
մենի մասին նա մտածել, երազել էր. և այն երկար ա-  
միսներով... այժմ լանկարծ լսել՝ թէ իրեն զրկում են  
իւր քաղցր լուսերից, ի հարկէ նա չէր կարող. հետեւ-  
պէս և չի պիտի թոյլ տար որդուն իրազործելու ալդ-  
պիսի մի անհեթեթ որոշում:

Դժբաղդաբար, երիտասարդն էլ իւր կամքի տէրն  
էր, (գոնէ, ինքը լաճախ ալդպիս էր ասում), ուրեմն և  
հեշտ չէր լետ կեցնել նրան իւր ընտրած ճանապար-  
հից: Ալդ պատճառով մօր ոռչ, ալդ չել լինիլ՝ վճռին-  
նա պատասխանեց խստութեամբ.



— Ամարանոցում զուարճանալուց առաջ՝ ես պարտք ունիմ կատարելու, մայրիկ. մի յուսանք թէ ես կըլիտաձգեմ գործը քեզ ընկերանալու համար։

— Պետեա, Պետեա, մէկ մտածիր թէ բնչ ես ասում... ամբողջ տարի աչքերնիս ջուր կտրած սպասել ենք քեզ, կարօտից հալուել... (կամենում էր ասել «հալուել ու մաշուել ենք», բայց մէկէլ մտածելով որ ինքը ժիխտ պարարտ է, ասաց) մաշուել է սրտներս, ալժմ գու նորէն կամենում ես մեզ թողնել... Ուրեմն գու սիրտ չունիս, գու հայր, մայր, եղբայր ու քոլը չես ճանաչում...»

Վերջին բառի վրայ տիկինը հեկեկալու նման մի սրտաշարժ ձայն հանեց, լետոյ հուպ տուտու աչքերը՝ լուսալով թէ՝ նրանցից մէկն ու մէկը մի կաթիլ արտասուք կըգլորէ իւր սպիտակ ու փափուկ ալտերի վըրայ, (որ ի հարկէ շատ տեղին կըլինէր) բայց տեսնելով որ այդ չեղաւ, ընդհատեց խօսքը...»

Երիտասարդին այնպէս թուաց թէ՝ գիւրազգաց մալրը սրտի նեղութիւնից չէ կարողանում ալլ ևս խօսել, ուստի որպէս զի չըլաղթահարուի այդ սրտաշարժ տեսարանից, իսկոյն ծոցից հանեց իւր լուշատերը և սկսաւ թերթել... Այս, բաւական էր նըրան նայել այդ լուշատերի էջերին, կարդալ, գոնէ, կէսը ևմեծ գործերին ալն ցանկին, որը նա կազմել էր մայրաքաղաքից վերադառնալիս, որպէս զի նա նորէն ոգևորուէր և առ ոչինչ գըէր մօր թախանձանքն ու արասուքը, կամ արհամարհէր ամարանոցի հանգստութիւնն ու զուարճութիւնները։

Եւ այդպէս էլ եղաւ։ Երբ Պետրոսը լուշատերը գրաւ նորէն ծոցը, նրա սիրտն արդէն այնքան էր ամրացել, որ նա ուղղակի ասաց։

— Դու, մալրիկ, բաղդաւոր կին ես. ունիս ամուսին, առողջ զաւակներ, մեծ հարստութիւն, սեփհական

ապարանք, գեղեցիկ ամարանոց, ապրում ես գոհ ու  
երջանիկ և, միւնոյն ժամանակ, չես կամենում զրկել  
քեզ նոյն իսկ մի աւելորդ զուարճութիւնից, ալսինքն,  
որ ամառուալ ամիսներում շընկերանալ քեզ որդիդ...  
Բայց կան աշխարհում մարդիկ, որոնք շտա անհրաժեշտ  
քաներից են զրկուած. ալ, ես գնում եմ նրանց մօտ,  
որպէս զի կարողանամ նրանց մի փոքր միսիթարել,  
նրանց կարեքներից մինը կամ երկաւսը լցնել:

Լիդիա Պաւլովնան որդու այս ճառից ոչինչ չըհաս-  
կացաւ, բայց Կիրիլ Կարպիչը (Հայր Կամսարեանը), որի  
անունը ծիսկին Տէր Օվանէսի ձեռքով չափաբերական  
մատեանում նշանակուած էր «Կարապիտի վորթի Կի-  
քակուս» և որը գեռ խալաթով նստած էր բազմոցի վրայ  
և երկար ծխափողը ձեռքին թէ ծխում և թէ լսում էր  
իիշեալ վիճաբանութիւնը, որդու վերջին խօսքերի վրայ  
մի անհանգիստ շարժումն արաւ։ Քաղցը ժպիտը, որ  
մինչև այն փալում էր նրա ածիլած, ու գէրաւթիւնից  
փայլող դէմքի, կըկնածալ ծնոտի և գորշ ընչացքով հո-  
վանաւորուած հաստ շրթունքի վրայ, չքացաւ իսկոյն.  
Ժաւամազ լոնքերը, կարծես, վուլու իջան աչքերի սուր  
հայեակքը աւելի խստացնելու համար. իսկ անխառն—  
հայկական քիթը, որ պատկառելի տեղ էր բռնած խո-  
շոր դէմքի վրայ, զգալի կերպով կախուեցաւ՝ որպէս զի  
տիրոջ դժգոհութիւնը մարմնացնէ իւր մէջ ամբողջովին:

Ինչու անհանգստացաւ Կիրիլ Կարպիչը—դրա պատ-  
ճառը բոլորավին այլ էր: Նա, ի հարկէ, չէր մտածում  
ոչ Լիդիա Պաւլովնայի մայրական փառասիրութիւնը գո-  
հացնելու և ոչ էլ որդու ամարալին հանգստութեան  
մտակին. նրան հետաքըքում էր աւելի լուրջ ու դըական  
խնդիր. ալսինքն այն՝ որ իւր որդին տասն երկու տա-  
րել շարունակ ուսման համար իրենից հագործներ ստա-  
նալուց յետոյ՝ այսօր, երբ արդէն ուսումն աւարտած  
վերադարձել է, փոխանակ լրջօրէն գործի կոչելու և

հօրից ստացած փողերի գէթ. մի մասի տոկոսը իւր ձեռքին քով հօրը վերադարձնելու և դրանով նրան ուրախացնելու, ընդհակառակը, դեռ նոր ծախսեր է անում և ինչ որ ճանապարհորդութեան կամ հեռաւոր ազգակիցների օգնելու վրայ է մտածում:

Անհանգիստ շարժումն անելով հանդերձ, կիրիլ կարպիչը մի կողմը դրաւ ծխափողը և ձեռքերը խրելով խալաթի գրապանները, որոնք գտնւում էին տկի պէս ուռած և խալաթի փնջազարդ ժապաւէնով հազիւ առնձահարուած փորի աջ ու ձախ կողմերում, հարցրեց որդուն:

— Պետո, չըլինի թէ քո գլխումն էլ հապոպներ են լոյս ընկել:

Երիտասարդ կամսարեանը, որ այսպիսի մի հարց ընկերներից չսելուց կարող էր նրանց մենամարտի հրաւիրել (որպէս զի ապացուցանէ թէ՝ որքան պատուասէր է), հօրից լսեց ալդ խօսքը նոյն իսկ առանց բարկանալու, համոզուած լինելով որ նա ուրիշ կերպ հաճոյախօսել չի կարող:

— Ի՞նչ ես կամենում դրանով ասել, հալրիկ, հարցրեց նա:

— Այն, որ ուսումը խելքահան է արել քեզ, որդի... ախար մի գնա դատարան և տես թէ՝ քեզանից մի տարով առաջ աւարտողները բնչպէս են այնտեղ գործեր պաշտպանում. ժամերով վիճում կամ ճառեր խօսում, իսկ դրա համար նրանք հարիւրներ, հազարներ են ստանում. իսկ դու դեռ կուօներից մասին ես մտածում, կամ նրանց հոտած գեղերում ասլրելու պլաններ քաշում: Սա ինչը նման է...

Կիրիլ կարպիչը նորէն ձեռք առաւ ծխափողը և հաստ շրմունքները կացնելով երկար բնի ծալրին, երկու անգամ առատօրէն ներս քաշեց ախորժելի ծուխը և ապա արտաշնչելով այն վերկացաւ տեղից:

— Գործի վրալ մտածիր, որդի, գործի վրալ, թէ չէ կոսներից շահ չի լինելու քեզ, այս ասելով նա դուրս գնաց սենեակից, չըկամենալով աւելի ձևնձրացնել որդուն։ Որովհետև, իբրև փորձառու մարդ, գիտէր որ խելքի հասած երիտասարդին տնօդուտ է երկար խրատներ կարդալը։ Բաւական է որ մարդ երկու խօսքով լայտնէ նրան իւր դժգուհութիւնը և ապա թողնէ նրան մտածել ու որոշել անելիքը։

Մինչդեռ կիդիս Պաւլովնան այդ կտրծիքին չէր։ Նա, իբրև կին, միշտ իւր ուզածն անել էր տուել երկար խօսելով, կամ թախանձելով, հետևապէս, հաւատում էր շատախօսելու փրկարար զօրութեանը։ Ալդ պատճառով էլ, երբ ամուսինը հեռացաւ, նա մօտ քաշեց որդուն, (որ դարձեալ ձեռքն էր առել իւր լուշատետրը, անշուշա, հօր խօսքերի ազդեցութիւնը իրենից հեռացնելու նպատակով) և իբրև մի մեծ նորութիւն, հաղորդեց նրան հետևեալը։

— Ես որ քեզ ասում եմ՝ գնանք միասին ամարտնոց, հօ նրա համար չեմ ասում որ միայն քաղաքի շոքերից ազատեմ քեզ։ ոչ. ես ուրիշ միտք էլ ունիմ և դրա համար է որ չեմ ուզում քեզ թողնել…

— Ի՞նչ միտք, հարցը երիտասարդը։

— Մարկոզովենց առւն հօ գնացիր, Աղելինին տեսար, հարցը մալրը խորհրդաւոր եղանակով։

— Ալո՛, գնացիր. Աղելինին էլ տեսալ. լետո՛ր.

— Իբրև թէ չըգիտես ինչո՞ւ համար եմ հարցնում, նկատեց մալրը խորամանկ ժպիտով։

— Ոչ։

— Զէ որ մի օր հաւանում էիր նրան։

— Հենց հիմա էլ հաւանում եմ։

— Հօ տեսնում ես թէ ինչ է դառել… ինչպէս մեծացել, գեղեցկացել է։

— Ալո՛, շատ է գեղեցկացել։

—Ե՛, ալդպէս աղջիկը որ քեզ սիրում լինի և քո  
պատճառով էլ Բօրժօմ լինի գալիս, բնչ կասես դրան:

—Երիտասարդը նաև մօր աչքերին և ուսերը  
վեր քաշեց:

—Գեղեցկութիւնը կայ, ուսումը կայ, քառասուն  
հազար էլ բաժինք... Այս ամառ անզատճառ բանը կը  
մերջանայ. որովհետև ծնողները համաձայն են, աղջիկն  
էլ հօ համաձայն է համաձայն. հարցը մնում է քեզ  
վրայ: Ի՞նչ ես ասում դու:

Երիտասարդը, կարծես, տատանւում էր: Աղելինա-  
քի անունը մի փոքր պղտորել էր նրա միտքը. եթէ ե-  
րեւակալութեանը ևս թոյլ տար՝ իւր առաջ պատկերաց-  
նելու գեղանի օրիորդին, այն ժամանակ արդէն հոսան-  
քը կըտանէր իրեն: Ալդ պատճառով, կարծես, իւր թու-  
լութիւնը զգալով, նա վերկացաւ տեղից և ողեռ տես-  
նենք, մտածենք, ժամանակ շատ ունինք» ասելով՝ դուքս  
քնաց պատշտամ:

## ¶

Բայց բաղդը շատ անդամ կատակներ է անում և  
դրանցից զուարծալին լինում է այն, երբ նա, չարիքից  
փախչող մահկանացուին՝ հենց նրա փախստեան ճանա-  
պարհի վրայ, բերում, հանդիպեցնում է նոյն չարիքին,  
որից սա խոյս էր տալիս: Ալդպէս պատահեց և Կամ-  
սարեանին: Հազիւ նա ելել էր պատշգամ և ձեռքը տա-  
րել ծոցը, որպէսզի լուշտետրը հանէ, և ահա տան  
մուտքի հնչակը քաշեցին: Սպասուհին վազեց դուռը  
քանալու: Եւ որովհետև Պետրոսն ևս մօտեցել էր սան-  
գուխտին, ուստի հետաքրքրուեց իմանալ թէ՝ ո՞վ է ե-  
կողը: Եւ ո՞րքան մեծ եղաւ նրա լուզմունքը, երբ տե-  
սաւ թէ՝ դա գեղանի Աղելինան է՝ իւր մօր հետ: Ան-  
շուշտ նրանք գալիս էին երիտասարդի ալցելութիւնը  
գոխորինելու և սրա մօրն իրենց խնդակցութիւնը լայտ-

Նելու։ Կամսարեանն իսկոյն ծոցը դրաւ լուշատեարը, որ նոր էր հանել և վայրկենաբար համոզուելով որ «հալոց ազգը խիստ դժբաղդ ազգ է», որովհետև նման արգելքներ խանգարում էին իրեն նրա վրաւ մտածելու, քնքուշ ժպիտը դէմքին դիմաւորեց հիւրերին և սիրալիր կերպով ողջունելով նրանց, առաջնորդեց դէպի ընդունարանը, ուր գտնւում էր արդէն Լիդիա Պաւլովնան։

Զափ... չըփ։ Ճիփ... չափ, համբուրուեցան բարեկամուհիները և սկսան իսկոյն մի սիրալիր զրոյց, որն առ հասարակ, սկզբում լինում է աղմկալի և ապա հետզհետէ մեղմանում, կանոնաւորւում է։

Ամենից առաջ Լիդիա Պաւլովնան մեղադրեց բարեկամուհուն՝ իրենց ալդքան ուշ ալցելելու համար և հսւատացրեց որ ամեն օր սիրով սպասում է եղել նրանց։

Տիկին Մարկոսեանը ներօզութիւն խնդրեց իւր ակամայ զանցառութեան համար, առարկելով թէ՛ չտփազանց զբաղուած են թէ ինքը և թէ դուստրը, ընդ նմին և հսւատացրեց (աւելի ջերմ խօսքերով քան տան տիկինը) որ իրենց բոլոր բարեկամուհիների մէջ Լիդիա Պաւլովնան միակն է, որին ցանկանալով ցանկանում են տեսնել թէ ինքը և թէ աղջիկը, հենց որ ազտա են լինում զբաղմունքից։ Դժբաղդաբար, ազատ ժամեր նրանք քիչ են ունենում։

Լիդիա Պաւլովնան, ի հարկէ, գիտէր թէ՛ ինչ զբաղմունք կարող է ունենալ տիկին Մարկոսեանը, իբրև բազմանդամ ընտանիքի մայր. բայց ցանկացաւ լսել մի բան, նաև, օրիորդ Աղելինայի զբաղմունքի մասին, մանաւանդ, իւր որդու Պետրոսի ներկայութեամբ։

Տիկին Մարկոսեանը, որ մի քիչ աւելի տարիքով էր քան Լիդիա Պաւլովնան և մի քիչ էլ պակաս գեղեցիկ քան թէ նա, բայց որը նազելու մէջ գերազանցում էր բարեկամուհուն, նազելով էլ պատասխանեց։

— Ա՛խ, սիրելիս, չես կարող երեակալել թէ՛ որ-

քան գործ ունի խեղճ երեխաս։ Առաւօտից մինչև ճաշ-  
շը ձըի դասեր է տալիս «որբերի» ուսումնարանում-  
ճաշից յետոյ՝ մեր չարաճճիների դասերն է սովորեցնում,  
երեկոյեան փաքրիկ աղջկանս դաշնամուրի վրայ վար-  
ժութիւն է անել տալիս։ Դրա վրան էլ աւելացրու  
այն, որ բարեգործական նպատակով տրուող ներկայա-  
ցումներին ու նուազահանդէսներին մասնակցում է ան-  
խակիր, որովհետեւ խնդրում, աղաչում են։ Իսկ իմ Աղե-  
լինան, հօ գիտէք, փափուկ սիրտ ունի և չի կարող  
մերժել…

— Ալդպէս չէ կարելի, սիրելիս, ալդպիսով դու կը  
յոգնեցնես քեզ, իսկ շատ յոգնելը վնաս է առողջու-  
թեանդ, դարձաւ Լիդիա Պաւլովնան օրիորդին, որ ժըպ-  
տալով լում էր մօր յալտարարութիւնը։

— Ո՛չ, ես չեմ յոգնում. ընդհակառակը, որքան  
շատ եմ գործում, այնքան աւելի առողջ եմ զգում ինձ,  
պատասխանեց օրիորդն աշխուժով և թեթև շառագու-  
նելով։

— Ալո՞, պարապութիւնը աւելի է վնասում առող-  
ջութեանը, քան չափականց զբաղմունքը. հաստաբեց  
երիտսսարդ Կամսարեանը։

Օրիորդի մալրը համաձայնուեց վերջինի հետ և  
առանց մի վալյկեան կորցնելու սկսաւ պատմել թէ՝  
ինչպէս ինքը առաջ թոյլ էր և տկար, որովհետև տան  
գործը մեծ մասամբ թողել էր սպասուհիներին։ Բայց  
այն օրից որ իմացաւ թէ՝ գործունէութիւնը կազդու-  
րում է մարդուն աւելի, քան բժիշկների գեղերը, (ալդ  
բանը ասել էր նրան մի բարեկամ բժիշկ), որ հիւանդներ  
չունենալու պատճառով ինքը լաճախ հիւանդանում էր),  
նա սկսաւ այնուհետև տան գործերից շատերը իւր ձեռ-  
քով անել և ալն օրից ի վեր այնքան առողջացաւ  
որ էլ չէր գանգատում ոչ սրտի ցաւից, ոչ թուլու-  
թիւնից։

Այս զբուցի ժամանակ Լիդիա Պաւլովնան լսում էր բարեկամուհուն ուշադրութեամբ և ընդնմին աշխատում՝ որ իւր լայն բացուած և ուղիղ բարեկամուհու դէմքին նայող աչքերը համոզեն վերջնիս թէ ինքը չափազանց հետաքրքրական է գտնում նրա բացատրութիւնը։ Մինչեռ երիտասարդը զբաղուած էր նրա աղջկանով։

Աղելինալին, իրաւ, նա ճանաչում էր վաղուց։ այսինքն, երբ դեռ ինքը գիմնազիօնի աշակերտ էր, իսկ նա՝ ինստիտուտի փոքրիկ աշակերտուհի։ Այդ ժամանակ նրանք դլացիներ էին, իսկ ծնողները՝ միմեանց բարեկամ։ Եւ որովհետև սրանք լաճախ այցելում էին միմեանց, ուստի իրենք էլ տեսնուում էին իրար հետ Բացի ալդ, նրանք հանդիպում էին միմեանց դպրոց գնալիս և ալդ դէսկըում երիտասարդը միշտ ուղեկցում էր օրիորդին մինչև ինստիտուտի փողոցը, խօսակցելով նրա հետ աշակերտներին հետաքրքրող նիւթերի մասին, կամ պատասխանելով այն հարցերին, որ Աղելինան լաճախ տալիս էր նրան։

Այդ ժամանակ օրիորդը 14 տարեկան էր. և թէպէտ մարմնով նիշար ու չըկազմակերպուած, բայց դէմքով գեղեցիկ էր և բնութեամբ խիստ աշխոյժ։ Այդ պատճառով Կամսարեանին դիւր էր գալիս ալնքան որ սա նրա մասին գովութեամբ էր խօսում միշտ՝ ոչ միայն ընկերների այլ և մօր առաջ։ Իսկ թէ մի փոքր էլ տղայի սրտին հաւատալինք, կարսդ էինք ասել թէ հէնց ալդ ժամանակ նա սիրահարուած էր փոքրիկ դրացուհուն. որովհետև միշտ մի առանձին փափագով էր հետամտում այն սիրուն ժպիտներին, որոնցով Աղելինան առաւտօնեան ժամերին հանդիպում էր նրան փողոցում։

Բայց շուտով երիտասարդը աւարտեց գիմնազիօնը և գնաց համալսարան, ուր շատերի հետ միասին մո-

ուացաւ նաև Աղելինալին։ Որովհետեւ համալսարանը նոր զբաղմունքներից զատ, տուաւ նրան, նաև, նոր բարեկամներ, որոնք իրենց կողմից ծանօթացըին նրան նոր զգացմունքների և ձգտումների հետ։ Բացի ալդ, մալրաքաղաքում շատ կալին Աղելինաներ. այնպէս որ եթէ Կամսարեանը ցանկանար երը և իցէ ժպիտներով զմալլուիլ, ստիպուած չէր լինիլ լիշել իւր նիհար դրա ցուհուն։

Սակայն անցաւ ժամանակ և նա, վերադառնոլով հալրենիք, տեսաւ նախկին Աղելինալին բոլորովին փոխուած։ Այժմ նա ալլ ևս ոչնչով նման չէր առաջինին։ Նրա տասն և իննամեալ ծաղկափթիթ հասակը ամփոփում էր իւր մէջ արբունքի հասած մի ազնուական կուսութիւն՝ գեղանի դէմքով, գրաւէչ աչքերով, արեանու կաթի խառնուրդն այտերին, վարդը՝ շուրջերին, որոնք նշան էին կեանքով ու կրակով լի քաջողջութեան։ Նրա ճկուն հասակն աճել էր արդէն սպասածից աւելի, կուրծքը զարգացել վալելուչ չափով, իսկ մարմնի մասերը լցուել, բոլորուել այնպէս համաշափ որ երետասարդը համեմատելով նրան մալրաքաղաքի ծանօթգեղեցկուհիների հետ, գտնում էր գըեթէ բոլորից գերազանց։

Եւ նա նալում էր նրան անթարթ աչքերով, լիշում էր մօր առաջարկութիւնը և ինքն իրեն մտածում. — «իրաւ որ արժէ ժառանգել այս գանձը»։

Լիդիա Պալովնան, որ աչքի տակով նալելով տեսնում էր թէ ինչպէս որդու հալեացքը անշարժ մեխուել է գեղանի օրիորդի վրայ, շտապեց օգուտ քաղել դէպքից և խօսքը դարձնելով ամարանոցի վրայ, լալտնեց թէ ինչպէս ապերախտ Պետեան որոշել է միայնակ թողնել իրեն այս ամտու։

— Ի՞նչպէս, միթէ կարելի է, բացականչեց տիկին. Մարկոսեանը այնպիսի մի եղանակով որ, կարծես, լալտ-

նուած նորութիւնը վերաբերում էր մի մեծ եղեռնագործութեան:

—Այս, միայնակ է թողնում և գնում է ճանապարհորդելու, աւելացրեց նա տիրութեամբ, ընդ նմին և սպասելով որ բարեկամուհին մեղադրական մի ազդուճառ ուղղէ որդուն:

—Այդ ձեզ չի վալելիլ, պարոն Պետրոս, նկատեց տիկինը լրջութեամբ. Բնչպէս կարելի է որ այսքան ժամանակ օտարութեան մէջ մնալուց լետոյ, չըմնաք ալժմ ծնողներիդ մօտ գոնէ ալնքան որ նրանք իրենց կարօտը առնեն ձեզանից: Ուրիշները, նոյն իսկ, գործերնին թողնելով՝ գալիս են ծնողների հետ ամառն անց կացնելու, իսկ գուք, որ ալստեղ էք, միթէ պիտի թողնէք նրանց ու հեռանաք:

—Բայց երբ հարկը պահանջնում է:

—Ի՞նչ հարկ. ամառը հանգստութեան ժամանակ է և ոչ գործի. ոչ մի հարկ այդ ամիսներում չի կարող ստիպել մարդուն զրկել իրեն ամարանոցի մաքուր ու զով օդից, հանգստութիւնից... ալ, մենք էլ տնով, տեղով գնում ենք Բօրժոմ, եթէ գուք էլ գաք, միասին կըլինինք և հիանալի ժամանակ կանցկացնենք:

—Հանդէսներ կըսարքենք, կանցերտներ կըտանք, իսկ այդ բաներում գուք մեզ միշտ կօգնէք, աւելացրեց օրիորդը, շտապելով մասնակցել մօր ցանկութեանը:

—Հանդէսներ, Բնչ նպատակով, հարցրեց երիտասարդը հետաքրքրութեամբ:

—Ի հարկէ, բարեգործական. այդ մասին խնդրել են մեզ մի քանի ընկերութեանց վարչութիւններ:

—Զե՞զ.

—Ալսինքն ինձ և ընկերուհիներիս:

—Հասկանում եմ: Եւ, իրաւ, ամարանոցում լաջող մուտք կունենաք: Ափսոս որ չեմ կարող օգնել ձեզ ալդպիսի բարի ձեռնարկութիւնների մէջ:

— Եթէ գաք ամարանոց, կարող էք օդնել, նկանեց օրիորդը ժպտալով:

— Այս, եթէ գամ. բայց եթէ չըգնմա:

— Կըխնդրեմ որ գաք, ասաց օրիորդը այնպիսի մի քնքշութեամբ, որի մէջ, կարծես, խօսում էր մտերմութեան ձգտող մի թագուն զգացմունք:

Երիտասարդը ժպտաց և չիմացաւ ի՞նչ պատասխանել: Նրան թուաց թէ՛ այդ ըովէին նա լսեց Ագելինայի նտիմկին, մանկական ձախնը, այն անմեղ, միշտ ժպտող, միշտ շարժուն ու կրակոտ Ադելինալի, որ ամեն առաւօտ հանդիպում էր իրեն գպրոց գնալիս, ողջունում այնքան սիրալիր և գտնում միշտ հարցեր իրեն զբաղեցնելու համար: Նրան թուաց թէ՛ այդ վայրկենին նորոգուեց նախկին մտերմութիւնը և թէ ինքն այլ ևս իրաւունք չունի սառն և անտարբեր խօսքերավ այդ նորոգուող բարեկամութեան հաճելի տպաւորութիւնը թուլացնել:

— ծշմարիտն ասած, շատ կըցանկալի կատարել ձեր խնդիրը, բայց...

— Ի՞նչն է արդելք լինում, ընդհատեց օրիորդն աշխուժով:

— Մի բարոլական պարտք, որ յանձն եմ առել դեռախտեղ գալուց և ձեզ տեսնելուց առաջ:

— Եթէ արդպէս է, ուրեմն ամենից առաջ այդ պարտքը պիտի կատարէք. մենք իրաւունք չունինք պահանջել որ դուք անկատար թողնէք այն, ինչ որ կատարել խոստացել էք գեռ ախտեղ գալուց առաջ:

— Շնորհակալ եմ, օրիորդ, դուք ինձ հասկանում էք. որքան ուրախ կըլինէի եթէ մայրս էլ այդ ձեռվ մտածէր, բայց նա...

— Մայրդ գիտէ թէ՛ ի՞նչ է մտածում, ընդհատեց որդուն Լիդիա Պաւոլնան. դու իրաւունք չունէիր մեզ լսելոց առաջ՝ ուրիշներին բաներ խոստանալ:

— Ի հարկէ, առաջ մտլրն է, լետոյ ուրիշները,  
ձայնակցեց տիկին Մարկոսեանը:

— Բայց դուք հօ չըգիտէք թէ՝ ինչ խոստումի մա-  
սին է խօսքը, նկատեց Աղելինան մօրը:

— Իսկ դու գիտես, հարցըց վերջինս:

— Ես էլ չըգիտեմ, բայց կարծում եմ որ պարոնը  
մի դատարկ բանի պատճառով չէր համաձայնուիլ զըբ-  
կել իրեն ամարանոցի հանգստութիւնից և գուարճու-  
թիւններից...

Այս ասելով Աղելինան մի խորհրդաւոր հայեացք  
ձգեց երիտասարդի վրայ, կամենալով, կարծես, հարց-  
նել թէ՝ «այդ բնչ բարոյական պարտք է, որի կատա-  
րումը աւելի անհրաժեշտ է, քան ինձ նման գեղեց-  
կուհուն ամարանոցում ընկերանալը»:

Երիտասարդն էլ, գըեթէ, այսպիսի մի նշանակու-  
թիւն տուաւ ալդ խորհրդաւոր հայեացքին, բայց ոչինչ  
չըբացատրեց, որպէսզի ալդալիսով հասկացնէ օրիորդին  
թէ՝ իրաւ, ինքը խիստ մեծ ու արժանաւոր նպատակի  
համար է զրկում իրեն ամարանոցի գուարճութիւննե-  
րից: Բայց որպէսզի բոլորովին անքաղաքավար չըգըտ-  
նուի օրիորդի հարցասիրութիւնը գոհացնելու նկատ-  
մամբ, կարևոր համարեց արսքանը լալտնել թէ՝ կը  
գայ մի օր, երբ ինքը կըբացատրէ նրան ալն կարևոր  
պատճառները, որոնք ստիպում էին իրեն զրկուիլ Աղե-  
լինալի աննման ընկերակցութիւնից:

## Ե

Տիկնոջ ու օրիորդի հեռանալուց լետոլ, Պետրոսն  
զգաց որ վերջինի իւր վրայ թողած ազգեցութիւնն  
ալնքան է սաստիկ, որ իւր նախկին մտածմունքներին  
վերադառնալու համար՝ ի գուր պիտի լինէր ալժմ գիմել  
իւր լուշատետրի օգնութեան: Նրան ալժմ հարկաւոր

Էր աւելի զօրեղ ցնցում, որպէս զի իւր մտքերը նորէն սկսէին փարիլ գտղափարտկան լայտնի նպատակին։ Այդ պատճառով նա առաւ Աբովեանի «Վէրք Հայաստանին» և իջաւ պարտէց։ Այդ գիրքը նրան սիրելի էր դարձել մանուանդ այն օրից, երբ ուստնօղական ժողովում իւր լայտնի խոստումն արաւ։ Ճեմարանաւարտ ուստանողն, որին ծանօթացանք պատմութեանս առաջին գլխում և որն ուսանողական ժողովներին նախագահելուց զատ՝ առաջնորդում էր ընկերներին, նաև, մալրենի լեզուին ու գրականութեանը ծանօթացնելու գործում, խորհուրդ էր տուել Կամսարեանին կարդալ Աբովեանի «Վէրքը», որքան կարելի է շատ։ — «Դու, որ նուիրում ես քեզ հայ ժողովրդի մոռացուած մասին, ալսինքն գիւղացուն ու մշակին, այդ գիրքը պիտի կարդաս յաճախ, ասել էր նա նրան, որովհետեւ բոլոր մարդկանցից ու գրքերից աւելի «Վէրք Հայաստանին» կարող է քեզ ծանօթացնել հայ գեղջուկի հոգուն ու զգացմունքներին, նրա արժանիքին ու թերութիւններին, նրա կարիքներին ու ցաւերին։ Եւ իրաւ, քանի Պետրոսը կարդացել էր այդ գիրքը, այնքան աւելի իւր խոստումն ու նուիրումը ոգեւորել էին իրեն, այնքան աւելի նա սկսել էր սիրել հայ շինականն ու գիւղացին, որոնց նա իւր հարազատ ազգակիցներն էր համարում, բայց որոնց, աւաղ չէր ճանաչում անձամբ։

Նստելով հովանաւոր ակաթենու տակ, նա բաց արաւ գիրքը, բայց... մեքենալաբար։ Նրան թւում էր թէ՝ գեղեցկուհին դեռ նայում է իրեն իւր սիրուն աշերով, թէ նա հենց նոր ժամանով ասաց իրեն՝ պէ խնդրեմ որ գաք։ իսկ մի փոքր յետոյ՝ աշխուժով աւելացրեց «Բնչն է արգելք լինում...»։ Այն, ալս ձայները հնչում էին դեռ երիտասարդի ականջում, իսկ գեղանի պատկերն ու փալլուն հայեացքը չէին հեռանում նրանից։ — «Դժուար է... իրաւ որ դժուար է, մտածում

էր երիտասարդը, ամենքին կարելի է թողնել, ամեն-  
ինչ կարելի է զոհել, բայց այս հրեշտակին, այս գի-  
ցուհուն... ճիշդ որ գժուար է. չէ որ սա ինձ համար-  
կարող էր լինել ամեն ինչ... և եթէ նա, իրաւ, ան-  
տարբեր չէ դէսլ ինձ... այն ժամանակ արդէն կատա-  
րեալ խելագարութիւն է թողնել նրան...: Բայց հէնց այս  
մտածմունքի հետ լիշեց երիտասարդն ուսանողների ժո-  
ղովը, իւր հանդիսաւոր խոստումն և այն ուժգին ծա-  
փահարութիւնը, որ հետեւց իւր լալտարարութեանը...  
լիշեց թէ՛ բնչպէս ոգեռուած ընկերները բարձրացրին-  
իրեն ձեռքերի վրայ, թէ ինչպէս «կեցցէները» դղրդաց-  
րին ներքնալարկի ցածուն դահլիճը:

«Ոչ, ես հաստատ կըմնամ իմ վճռին, ես կըկա-  
տարեմ իմ խոստումը», որոշեց երիտասարդը և նորէն  
առաւ գիրքը, որ արդէն ֆակել, գրել էր նստարանին-  
բանալով գիրքը, նայեց նրան մեքենալաբար և ապա-  
գրաւ ծնկներին: Այս անգամ էլ մի ուրիշ, սակարկող  
պարման գրաւեց նրա մտածութիւնը:

— «Ես կըկատարեմ իմ խոստումը, ես կընուիրեմ  
ինձ՝ մոռացուած ժողովրդին... բայց եթէ Աղելինան ըն-  
կերանար ինձ ալդ գործում, օ, որպիսի՞ մեծ լաջողու-  
թեամբ կըպսակուէր իմ նուիրումը... իրաւ, չէ որ ա-  
մենսեռանդուն աշխատանքն էլ ապարդիւն կանցնէ, ե-  
թէ նրան չըլսրախուսէ կնոջ սէրն ու ժպիտը... Եւ բնչ-  
երջանկութիւն. մենք միասին կաշխատէինք, միասին  
կըգործէինք...»:

Այս միտքը երկար զբաղեցրեց երիտասարդին: Նա  
մտածում էր, մինչև անգամ, համակերպիլ առ ալժմ-  
իւր մօր ցանկութեան, գնալ ամարանոց, մտերմանալ  
ալնտեղ Աղելինային, նշանուել, պսակուել և լետոյ...  
ի հարկէ Աղելինայի հնտ միասին վերագառնալ գիւղը:  
Իսկ ալնտեղ... չէ որ երկու խելքը կարող էին աւելի  
լաւ գործել, քան մէկը:

Բայց լալտնի չէ թէ ինչու երիտասարդի երևակա-  
յութիւնը նորէն ալդ գիւղից փոխադրեց նրան ամարա-  
նոց։ Նա պատկերացրեց իւր առաջ նշանադրութեան  
հանդէսն, ասլա հարսանեաց պատրաստութիւնները,  
վերջը՝ փառալեղ պատկադրութիւնը, հարուստ հիւրե-  
րը, մետաքսի, ադամանդի և փարիզական ճոխութեանց  
մէջ փայլող, կիսամերկ կրծքերով ու հոլանի թևերով  
գեղեցկուհիները, որոնց մէջ սպիտակազգեստ և ծաղ-  
կալսակ Աղելինան պիտի երևար իբրև մի հրաշագեղ  
գիցուհի, յաւերժահարսաներով շրջապատուած...»:

Բայց հէնց ալս փայլի ու շքեղութեան պատկերը,  
կարծես, մարմին առնելով՝ շշնջաց իւր ականջում՝ «մի-  
թէ չես ցնորում... միթէ Աղելինան, այն կրթուած,  
զարդացած, փափկութեան մէջ մեծացած, թատրոնի,  
նուազահանդէսների և պարահանդէսների սովոր աղջի-  
կը կըհամաձայնի թողնել քաղաքը, նրա կեանքով ու  
հրապուրներով լի մթնոլորտը և գնալ, մտնել գիւղը,  
աշխարհի մի լուռ, անձանօթ անկիւնը, թէ ինչ է՝  
ալդաեղ պիտի հոգալ շինականի կեանքը բարելաւելու  
մասին...»։

Ալս գաղտնի շշունչը ցըեց երիտասարդի նախկին  
մտքերը։

— «Նա, մինչև անգամ, կարող է ինձ վրալ ծիծա-  
ղել, իմ նախատակը ծաղբել, եթէ ես գրա մասին խօսեմ  
նրա հետ» տրամաբանեց Պետրոսը և տիրելով գլուխը  
կախեց։

Նրա աչքերն ընկան ծնկանը դրուած գըքին և  
նա, կարծես, մտածելուց լոգնած, սկսաւ կարդալ բաց  
երեսի վրալ Աթուենց աղջիկ Թագուհու մասին գրուած  
հետևեալ տողերը։

«Բաս բնչ կըլէր որ էսպէս չէր էլէլ։ Մինչև էն  
« հադաղը (միջոցը) նրա (Թագուհու) ականջը՝ մէկ թը-  
« թու խօսք չէր լսել, նրա աչքը՝ մէկ դառը օր չէր

« տեսել. նրա երեսը՝ մէկ կոշտ զբից չէր եկել. Վարդի  
 « ալէս ծաղկել, մանիշակի պէս մեծացել էր. Տասնը  
 « հինգ տարին անց էր կացել, դեռ նրա անմեղ հոգին  
 « աշխարհքեց մէկ բան չէր խաբար. Նրա ընկեր աղ-  
 « ջկերքը գուներին, կտրներին ման էին գալիս, օր անց  
 « կացնում, նա ծունկը մօր ծնկանը կպցրած, եա կար  
 « էր անում, եա քարգահ, եա իրենց տանն ու դռանն  
 « էր մտիկ տալիս, դա իրանց մալին, ապրանքին աչք  
 « ածում. Ղուզը գլխի վրովը թռչելիս՝ կարմրատակած,  
 « շունչը կտրած տուն էր ընկնում որ իր շվաքն էլ ա  
 « ոք մին չըտեսնի. Մօր մէկ մատը փուշ ըլելիս, եա  
 « մէկ տեղը ցաւելիս, ուզում էր հոգին հանի իրան  
 « տալ. էլ քար, էլ խոտ չէր մնում որ նա վրէն չըչո.  
 « քի ու Աստծու ողորմութիւնը խնդրի. Աղքատ տես-  
 « նելիս՝ բերնի թիքէն հանում, իրան էր՝ տալիս, որ  
 « նրան օրհնի, արևշատութիւն խնդրի. Բաղն էն ժա.  
 « մանակն էր գնում որ լիսն ու մութը դեռ չէր բա.  
 « ժանուած ըլում, բաղիցն էլ էն վախտն էր տուն գտ-  
 « լիս որ մութը գետինն առած, ոտը՝ քաշուած, խա.  
 « ղաղուած էր ըլում. Ով նրան ուզենար տեսնի, եա  
 « ծառի, եա պատի տակի պէտք է տափ կենար՝ որ  
 « նրա երեսին մտիկ տար, նրա աչքերի լսովն հալիլ  
 « մայիլ մնար...: Զալիք չիմանի, մանիշակի վրայ, վար-  
 « դի, թթենու տակին, եա քչքչան առուի մօտ որ բա-  
 « ղի վախտ քնած չէր ըլում, հենց իմանաս երկնքիցը  
 « լիս ա վեր եկել, ափնիքը հալի դառել...: Քունը  
 « նրա աչքերին էնպէս էր մօտանում, ինչպէս մէկ  
 « սրբի երկնալին հրեշտակը, թևերն երեսին փուռմ,  
 « անմահական էրազով նրան գըկում, գգւում, արթ-  
 « նացնում, էլ եղ իր գիրկը գնում... Ա՛խ, որ մէկն ա.  
 « սեմ: Նրա ամեն մէկ շարժմունքը, ամեն մէկ խօսքը,  
 « ամեն մէկ մտիկ տալը, ամեն մէկ աչքի ու պաօշի  
 « ժամ գալը՝ հրաշք էր: Էն լուսակոլոլ աչքերը, էն

« Խնկան ծաղիկ շրթունքը, որ բաց չէր ըլում, մարդ  
 « ուղղում էր ոչ ուտի, ոչ խմի հենց նրան մտիկ տալ,  
 « նրա սուրահի բօլին թամաշալ անի, նրա ոտքի տա-  
 « կին հոգին տալ, նրա ձեռիցը իր մահն առնի...:  
 « Եւ էս երկնալին հրեշտակը, էս անմեղ գառն էր էն  
 « հազարին՝ էն գազանների (Հասան-խանի Փարքաշնե-  
 « րի) ձեռին... ինչ քարացած, տալառաժ սիրտ պէտք  
 « է ըլի, որ նրան տեսնելիս, կամ նրա պատմութիւնը  
 « լսելիս գլխին կրակ չըվառուի...»:

Երիտասարդն էլ չըշարունակեց։ Որքան Թագու-  
 հու գեղեցկութեան նկարագիրը հիացմունք պատճառեց  
 իրեն, այնքան էլ վերջին տողերը լուզեցին իւր հոգին։  
 Նա փակեց գիրքը և ինքն իրեն շնչաց։

— «Ամօթ ինձ, հազար ամօթ... Եւ ես գեռ տա-  
 տանւում եմ, դեռ երկմտում եմ։ Միթէ կարելի է մի  
 վայրկեան անդամ ուշանալ... Մի ժողովուրդ, որ այս-  
 պիսի ծնունդներ ունի իւր մէջ, միթէ արժանի չէ մեր  
 խնամքին ու օգնութեան։ Ում մասին եմ մտածում, —  
 մի Աղելինալի, բազից երես առած մի կենցաղասէր աղ-  
 ջկալ... Ինչո՞ւ չըգնամ Աժոյենց աղջկերտնցը, Թագու-  
 հիներին պտրելու... Եթէ այսօր Հասան խանի Փար-  
 քաշները չեն սպառնում նրանց, հօ տգիտութիւնն ու  
 խեղճութիւնը, հօ վաշխառուներն ու օրինազանցները  
 սպառնում են։ Ինչո՞ւ ուրեմն չերթամ օգնութեան կո-  
 րօտ այդ ժողովրդի մօտ։ Ինչո՞ւ չըծառալեմ նրանց և  
 իմ աշխատութեան ընկեր չընտրեմ Թագուհիների մի-  
 ջից... Միթէ նրանց անմեղ ու միամիտ սէրը պական  
 ուժով կըխրածուաէ և կոգևորէ ինձ։ Այն աղջկը, որ  
 աչքը բանալու օրից ճանաչում է միայն իւր ծնողնե-  
 րին, իւր տունն ու գուռը, իւր արտն ու ալգին, որ  
 իւր ուրախութիւնը գտնում է ծնողական լարկի տակ,  
 արդար աշխատութեան մէջ, որ իւր սէրը խնամքով  
 ծածկում ու պահում է սրտի խորքում և նուիրում

միայն նրան, ով Աստուծոյ կտմքով վիճակուել է իրեն ամուսին, և որն ապա իւր կեանքն ու ուրախութիւնը որոնում է նրա մէջ, մբթէ հազար անգամ աւելի մեծ, բարձր ու արժանաւոր չէ քան այս զուարճասէր, փողոցի ու հանդէսների սիրահար, նորաձեռւթեանց երկրպագու, դէմքեր ու զգացմունքներ կեղծող, շաղակրատ, նազող, հաճոյասէր, ամուսնանալուց առաջ արդէն աշխարհը ճանաչող, թագուն անկիւններում օտարի հետ պաշպչուող, իսկ սալօններում՝ սիրոյ սրբութիւնը գրուատող օրիորդներն ու մեծուհիները... Այս, որոշուած է, ես կերթամ և ինձ ալլ ևս չի արգելիլ ոչ ոք:

## 2

Դեռ այս մտքի վրայ էր Կամսարեանը, երբ յանկարծ նրա ետևից հնչեց մի թաւ ձայն.

— Տո, Պետք դեռ ալսոեղ ես, իսկ ես կարծում էի թէ՛ Մասիսն արգէն անցել ես:

Պետրոսը յետ նայեց և տեսաւ մէկին այն ընկերներից, որոնք ուսանողական ժողովում լսելով իւր խոստումը, գղրդացրել էին օդը կեցցէներով և իրեն բարձրացրել ձեռքերի վրայ:

— Գնում եմ, բարեկամ, գնում եմ, պատասխանեց նա, կարծես, շփաթուելով և արագ տեղից ելնելով:

— Ճշմարիտ, թէ կատակ ես անում, հարցրեց երիտասարդը ձեռքը պարզելով ընկերին:

— Ի հարկէ, ճշմարիտ, կատակ ինչո՞ւ եմ անում:

— Եղբայր, մեծ մարդ ես, խոստովանում եմ.

բայց երբ:

— Շուտով, հէնց այս քանի օրը:

— Ուրեմն պատրաստութիւնդ տեսել ես:

— Արգէն: Կամենո՞ւմ ես, արի ցոյց տամ:

— Հապա, տեսնենք, հետաքրքրական է, ասաց ե-

րիտասարդը և հետևեց Պետրոսին:

Առաջնորդելով ընկերին իւր սենեակը, Պետրոսն սկսաւ մի մի ցոյց տալ նրան այն ամենը, ինչ որ գնել էր գիւղ տանելու համար:

— Ամենից առաջ տես այս թամբը, վենգերտկան է, բոլորը խոզի կաշուից. 60 ըռորի արժէ. սանձը, տապանդակները մաքուր պողպատից:

— Այդ ինչու համար է:

— Ի՞նչպէս թէ՝ ինչու համար. գիւղերը չի պիտի պատեմ. միշտ հօ մի տեղ չի պիտի մնամ:

— Խսկ ձբն:

— Զին էլ ալնտեղ կըդնեմ, ալստեղից հօ չեմ տանելու, ինչ տւելորդ հարց է:

— Հասկացայ. յետո՞յ:

— Սա էլ հրացանս. ամերիկական նոր տեսակի, երկփողեալ, իւր բոլոր պարտգաներով արժէ 120 ը.:

— Այդ ինչու համար է. տւազակներ պիտի հաւածես:

— Ի՞նչ աւազակներ, ինչեր ես հարցնում. որսորդութեան չի պիտի գնամ. բոլոր օրը հօ պարտավելով չի պիտի անց կացնեմ. մի մի անդամ էլ զուարճութիւն է պէտք. — այս էլ պայուսակս, բոլորը կաշուեկար, պղնձէ օղակներով, թամբի վրայ լարմարեցնելու համար. — այս էլ ճանապարհի կօշիկներս. — այս էլ դաշտալին հեռագիտակ. միշտ հարկաւոր է լինում. — այս էլ կողմնացոյց...

— Կողմնացոյց, այդ ինչու համար է, ծովերի վրայ հօ չեմ թափառելու:

— Ախ, ի՞նչ տպուշն ես: Տօ, չի պատահիլ որ տնտառներում պտտելիս լանկարծ մոլորուեմ. այ, հենց այդպիսի ժամանակ կողմնացոյցը կարող է ինձ ցոյց տալ թէ՝ ինչ ուղղութիւն բռնեմ որ գիւղը դուրս գամ:

— Այդ հօ բոլորը քեզ համար ես հոգացել, գիւղացիների համար ինչ ես տանում:

— Սպասիր, նրանց համար էլ կայ. տեսնում ես...

այս ասելով Պետրոսը ցոյց տուաւ սեղանի վրայ գըտ-  
նուող գրքերի մի կոյտ և նրանցից մի մի հատ առնե-  
լով՝ շարունակեց.—այ «Պոլնայ երց օհոտ»—Մարքա—  
Մանիք. սա էլ ասենք ինձ համար է, բայց գիւղացինե-  
րին էլ կը հարկաւորուի: ԶԵ որ որսորդութեան մասին  
ևս կարող եմ խորհուրդներ տալ նրանց:—«Ջագավա սո-  
բակա»—Փրարիխ Օւալյան. սա նոյնալէս կարեոր գիրք է  
որսորդական շներ վարժեցնելու համար:

—Ոյ մարդ, գու կարծում ես թէ՛ հայ գիւղացին  
ըան ու գործ չունի, հենց միշտ որսի ետևից պիտի լինի:

—Համբերիթ, բարեկամ. ախար մենք էլ քեզ չափ  
մտածել գիտենք թէ ոչ: Ո՞յ, «Պլուտայ ակադեմիա և պլու-  
տայ սահման»— Раевскаго, սա հօ պատուական ձեռնարկ է  
ծառեր տնկելու, պատուաստներ անելու, պաղատու այ-  
գիներ խնամելու համար:

—Հա, գրան խօսք չունիմ:

—Իսկ սա «Դոմաշնայ օգործ»— Մանուկյա, ընտիր չեռ-  
նարկ է բանջարանոցների համար: Սրան կցուած է Չե-  
ռնոգլազով— ի մի գեղեցիկ տշխատութիւնը՝ «Օգորչի, ձին,  
արբuzы և тыквы վերնագրով, յատուկ ալդ չորս տեսակ  
պատուղները աճեցնելու համար:

—Յետոն:

—Սա էլ «Общедоступное Руководство къ земледѣлію»

—Կոստычевա. թէպէտ համառօտ, բայց շատ պարզ և  
հասկանալի ոճով կազմուած մի ձեռնարկ է երկրագործու-  
թեան համար: Իսկ սա՝ Կոպպէի յալտնի «Երկրագոր-  
ծութիւն և անասնապահութիւն» աշխատութիւնն է, որ  
թարգմանել է պրօֆեսոր Վ.օլֆը. լիսուն տարուց ա-  
ւելի գործածութեան մէջ է և, հմուտների կարծիքով,  
գիւղատնտեսական գրականութեան մէջ համարւում է  
իբրև կլասիք գրուածք: Իսկ սա՝ «Տրիոլյան»—  
Տրիոլյան. յատկապէս կազմուած եղջիւրաւոր անասնա-  
ներ և ձի, ոչխար ու խոզ պահելու համար:

— Ուրբէշ:

— Խոկոյն. «Практическое Руководство виноградарства и виноделия» — Винберга. սա անհրաժեշտ գիրք է արդեգործութեան և գինեղինութեան համար: Մեր գիւղացիների գլխաւոր պարտպմունքը, կարծեմ, դա է: Այդպատճառով այս ճիւղին վերաբերեալ ձեռնարկներ մի քանիսն եմ ընտրել: Այ, «Руководство по виноградарству» — Пабеля, բազմաթիւ ու բազմազան նկարներով...:

— Խոկ մեղուապահական, հաւաքուծական...:

— Սպասիր, սպասիր, դրանք էլ ունիմ. այ «Պտղութեած» — Դ-ր Պրինցի. պատուական աշխատութիւն է՝ գերմանիերէնից թարգմանուած: Խոկ սա «Պշելա և պշութեած» — Շուլերով. մեղուապահական ընտիր ձեռնարկներից մինն է: Սա էլ «Կայ ճօնաւած առևտել» — Իվերսեա, շերամապահութեան վերաբերեալ մի գեղեցիկ աշխատութիւն է: Սրանցից զատ, եռ գնել եմ, նաև, մի քանի հատ հայերէն գրքեր, այ, օրինակ, Մելիք Շահնազարեանցի «Բուսական աշխարհը», «Գործնական գինեգործութեան» և «Երամապահութեան» ուղեցույցները: Նոյնպէս Քաջունու «Մեղուաբուծութիւնը» և «Երամապահութիւնը»: Թէպէտ ոուսերէն ձեռնարկներով ես Գարող եմ լի ու լի ծանօթանալ գիւղատնտեսական այս ու այն ճիւղի հետ և, ըստ այնմ, հարկ եղածը սովորեցնել գիւղացիներին, այսուամենայնիւ, այդ ձեռնարկների մէջ կըլինին բազմաթիւ տերմիններ, որոնց հայերէնը ըշգիտեմ. ահա, այդ գէպքում օգնութեան կըհասնեն ինձ հայերէն ձեռնարկները:

— Այո՛, լաւ ես մտածել. գիւղացու աշքում ամեն կերպ պէտք է հեղինակաւոր երևալ: Բայց ուրիշ էլ ի՞նչ պատրաստութիւն ունիս:

— Ել Բնչ պիտի ունենամ. մնացածն էլ գլխումս է...:

— Եւ գրպանումդ, ի հարկէ:

—Առանց դրան հօ բան չի առաջանալ: Բայց սկզբում, կարծեմ, հարկ չի լինի գըպանի օգնութեան դիմելու: Դեռ առաջ պէտք է գիւղը մտնել, գիւղացուն ու նրա կարիքներին ծանոթանալ, իսկ այնուհետև ամեն բան հեշտ է:

—Նախանձում եմ քեզ, բարեկամ, որքան բաղդաւոր ես որ կարող ես ալդպէս ազատօրէն նուիրուել հասարակաց գործին. իսկ ես...:

—Ո՞վ է քեզ խանդարում հետեւ ինձ: —Ո՞վ է խանգարում... աղքատ ծնողներ պահելու, քոյր ու եղբալը ապրեցնելու և, նոյն իսկ, ինձ նման ահագին մարդուն կերակրելու անհրաժեշտութիւնը:

—Ալո՛, իրաւունք ունիս, քո դրութիւնը ծանը է, յարեց իսկոյն Կամսարեանը, զգալով որ ընկերի ցաւոտ տեղը շօշափեց:

—Բայց իմ դրութիւնը մասամբ բարւոքելուց լետով, պիտի լիշեմ նաև քեզ հետեւ պարտքս. մի կարծիր թէ՛ ուսանողական ժողովի որոշումը կարող եմ երբ և իցէ մոռանալ:

—Մի՛ վշտանար, բարեկամ, քո ծնողներն ու հարազատները նոյնպէս հասարակութեան անդամներ են. եթէ դու նրանց խնամում ես, դրանով արգէն որոշ չափով ծառայում ես հասարակութեանը: Ես հաւատացած եմ որ երբ դրութիւնդ բարւոքուի, կաշխատեսաւելին անել:

—Անշուշտ:

—Ուրեմն, չըխօսենք ալլ ևս ալդ մասին. դառնանք իմ ձեռնարկութեան: Ի՞նչ խօրհուրդ ես տալիս, որ կողմում հաստատեմ օգնութեան գործը:

—Դու գեռ չես որոշել:

—Ոչ, որովհետև մտածում եմ թէ՛ բոլոր կողմերն էլ մի և նոյն են ինձ համար. ուր որ հայ շինական կալ, այնտեղ էլ կարող եմ գործել:

—Եւ շատ լաւ ես մտածում։ Նստիր երկաթուղին  
և գնա դէպի աջ։ Հենց որ հասար Ազստափա (դա  
մեր պատմական Ազստեն է, չըմոռանաս), իջիր այնտեղու  
Փոստայի կառքը Ազստե գետի ուղղութեամբ կըտանէ  
քեզ դէպի Դիլիջան։ Անցել ես դու այդ ճանապարհով։  
—Ո՞չ։

—Լաւ ուրեմն, կերթաս, կըտեսնես այն աշխարհն,  
ուր քո պապերն են ապրել։ Կարող ես հենց առաջին  
պատահած հայ զիւղում իջնել և ալնտեղ էլ քո օդ-  
նութեան գործը հիմնել։ Ալժմեանից, ի հարկէ, դժուար  
է որոշել թէ՛ ինչ պիտի անես. բայց երբ կըմտնես ժո-  
ղովրդի մէջ, այն ժամանակ արդէն ինքդ կըտեսնես  
նրա կարիքները և կսկսես հոգալ կարևոր դարմանը։  
Ինչակէս լաւ, նոյնպէս, և վատ օրինակը վարակիչ է։  
Երբ քո ձեռքը կստեղծէ մի գիւղում զովութեան  
արժանի գործ, կըտեսնես որ լետոյ լուս կընկնեն ուրիշ  
ձեռքեր, որոնք նոյնը կանեն ուրիշ զիւղերում։ Ո՞ գի-  
տէ, գուցէ հենց քեզ է վիճակուած կարապետ լինել  
այն գաղափարական գործին, որ ամփոփում է իւր մէջ  
զիւղական ժողովրդի ապագայ բարօրութիւնը և որի  
մասին այնքան շատ խօսել ու քարոզել է հայ լրա-  
գրութիւնը։ Երևակալիր թէ՛ ինչպիսի՛ հռչակ պիտի  
վաստակես դու հայ հասարակութեան մէջ, երբ լալտ-  
նի լինի մի օր թէ՛ այն, ինչ որ գրողները միայն երա-  
զել են, դու արդէն մարմնացրել ես քո հաստատուն  
կամքով։

—Դու ինձ ոգևորում ես, բարեկամ, բացագանչեց  
Կամսարեանը և ընկերոջ ձեռքն առնելով ամուր ամուր  
սեղմեց։

—Ոգե որուիր ու գնա գործիր. Աստուած անշուշտ  
կ'օրհնէ քո ընտրած ճանապարհը։

Ալսքանն արդէն բաւական էր որ Կամսարեանն  
իւր որոշումը իրագործէր անպատճառ։ Ընկերոջ հեռա-

նալուց լետով, նա սկսաւ իւր իրեղէնները կարգի բերել  
ու կապկպել:

Զընալելով որ այդ առժին Լիդիա Պաւլովնան ու  
Կիրիլ Կարպիչը մի անգամ ևս լուրջ վիճաբանութիւն  
ունեցան իրենց որդու հետ և այս անգամ մալրը ոչ  
միայն լուզուեց, այլ և կարողացաւ լաց լինել, ալսու-  
ամենալինիւ, Պետրոսը մնաց անընկճելի: Միակ զիջումը,  
որ նա արաւ ծնողներին, այն էր, որ խոստացաւ չեր-  
կարել ճանապարհորդութիւնը և աշխատել մի քանի  
շաբթով վերադառնալ Բորժոմ:

Այս պայմանը խաղաղացրեց երկու կողմերն էլ և  
Պետրոսը մի լուսնկալ երեկոյ իւր պարկ ու պուրկը  
կառքի մէջ ժողովելով, ճանապարհուեց դէպի երկա-  
թուղու կալարանը:

### ՄՈՒՐՅԱՑԱՆ

(Կը շարունակուի)

